

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի 2019 թ. դպրոցական օլիմպիադայի
մարզային (քաղաքային) փուլի
(տևողությունը – 150 րոպե)

10-րդ դասարան

1. Ի՞նչ են պարամուր, կամպուր, լյանուր և պրերիան: Դրանցից յուրաքանչյուրը որտե՞ղ է գտնվում.....2 միավոր
2. Որո՞նք են ԱՄՆ – ի ավտոմեքենաշինության, մետաղաձուլության, նավթաքիմիայի և ավիահրթիռաշինության մայրաքաղաքները.....1 միավոր
3. Երկրի բնակչության թիվը 4 մլն է, իսկ բնական աճի գործակիցը՝ 10 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 13 400, իսկ արտագաղթը՝ 7550 մարդ.....2 միավոր
ա) որոշել բնակչության բնական աճը
բ) որոշել բնակչության մեխանիկական աճը
4. Գետի ջրի արագությունը (V) 80 սմ / վրկ է, կենդանի կտրվածքի մակերեսը (S)՝ 1,7 մ²: Հաշվել գետի ծախսը (Q) և հոսքը (W) 1 օրում: Պատասխանները ստանալ հաշվարկով և գրել չափման միավորները..... 2 միավոր
5. Թվարկել Արաբական թերակղզում գտնվող վեց միապետություն.....1,5 միավոր
6. Ծարքից դուրս գրել օրգանական ծագման նստվածքային ապարները և հանածոները..... 1,5 միավոր
գնեյս, աղ, կվարց, տորֆ, մարմար, քարածուխ, գիպս, բնական գազ, կրաքար, նավթ, կավ, օբսիդիան, կավիճ, գրաֆիտ
7. Նշված ժողովուրդներից յուրաքանչյուրի դիմաց գրել համապատասխան լեզվարնտանիքը և լեզվախումբը..... 3 միավոր
վրացիներ, պարսիկներ, շոտլանդացիներ, քրդեր, լատիշներ, կարակալպակներ, հունգարներ, ավստրիացիներ, կոմիներ, հայեր, ադրբեջանցիներ, արաբներ
8. Թվարկել Սյունիքի և Կոտայքի մարզերի քաղաքային բոլոր բնակավայրերը՝ բացառությամբ մարզկենտրոններից..... 3 միավոր
9. Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
 1. Արևմտյան Եփրատը սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից, իսկ Արևելյան Եփրատը՝ Ծաղկավետ լեռնազանգվածից:
 2. Բասենի դաշտը տարածվում է Արաքս գետի վերին հոսանքի ավազանում:
 3. Խարբերդի դաշտում միախառնվում են Արևելյան և Արևմտյան Եփրատները:
 4. Կարնո և Ալաշկերտի դաշտերը Արևելյան Եփրատի հովտում են:
 5. Ամենացուրտ ամիսը դեկտեմբերն է, իսկ ամենատաքը՝ հունիսը:
 6. Տեղումների քանակն արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ աճում է:

10. Հարավային Եվրոպայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
1. Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասն արտադրվում է ատոմակայաններում:
 2. Հայտնի է բարձրորակ շինանյութերի և շինարարական իրերի արտադրությամբ:
 3. Սեփական նավթային հարուստ ռեսուրսների շնորհիվ ունի զարգացած նավթաքիմիական արդյունաբերություն:
 4. Տնտեսական զարգացման մակարդակով առաջինն է Եվրոպական տարածաշրջանում:
 5. Տարածաշրջանի ամենազարգացած պետությունն Իտալիան է:
 6. Արդյունաբերության կառուցվածքում մեծ է արդյունահանող ճյուղերի բաժինը:
11. Գրել էլեկտրաէներգիայի արտադրությամբ աշխարհի չորս առաջատար երկրները (առաջինից չորրորդ տեղը զբաղեցնողները՝ հերթականությամբ).....1 միավոր

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թ. Գրիգորյան